ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՎՏՐԻ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№4/08

Քաղ. Երևան 27 փետրվարի 2008թ.

Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. փետրվարի 27-ի նիստում (արձանագրություն № 58/3) քննարկեց «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2007թ. դեկտեմբերի 20-ի դիմումը GRANDVISION (FR) ընկերության «Grandvision» (IR 692898) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱԾՄԴ-ի 09, 40 և 42-րդ դասերի բոլոր ապրանքների և ծառայությունների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ իր ընկերության կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «Grandvision» (IR 692898) ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից գրանցման պահից սկսած չի օգտագործվել և չի օգտագործվում ԱԾՄԴ-ի 09, 40 և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար համար ավելի քան 5 տարի, և հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, խնդրել է «Grandvision» (IR 692898) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱԾՄԴ 09, 40 և 42-րդ դասերի բոլոր ապրանքների և ծառայությունների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 24.12.07թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «Grandvision» (IR 692898) ապրանքային նշանի սեփականատեր GRANDVISION ընկերությանը (65 avenue d'lena, F-75116 PARIS (FR)) և GRANDVISION ընկերության ներկայացուցիչ «Cabinet Vittoz» ընկերությանը (9 rue Scribe F-75009 PARIS(FR)) բողոքարկման խորհրդի կողմից 2007թ. դեկտեմբերի 20-ի «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. փետրվարի 27), ՀՀ

արտոնագրային հավատարմատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ մտավոր սեփականության գործակալության կողմից ստացված հետծանուցումների հասցեատերերի կողմից ծանուցումները ստացվել են 09.01.08թ և 07.01.08թ: Սակայն 2008թ փետրվարի 27-ի բողոքարկման խորհրդի նիստին ոչ սեփականատերը, ոչ էլ սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ GRANDVISION ընկերությանը, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն 2008թ փետրվարի 27-ի բողոքարկման խորհրդի նիստին չի ներկայացել և որևէ ապացույց չի ներկայացրել, որից կարելի է եզրակացնել, որ ընկերությունը «Grandvision» (IR 692898) ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը գտնում է, որ ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Քենդի» Հայ-Կանադական ՀՁ ՍՊԸ-ի 2007թ. դեկտեմբերի 20-ի դիմումը ամբողջովին և GRANDVISION ընկերությանը (FR) «Grandvision» (IR 692898) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱԾՄԴ-ի 09, 40 և 42-րդ դասերի բոլոր ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան